ԿԱՐԾԻՔ

Անի Գագիկի Մազմանյանի <<Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում>> խորագրով ԺԳ.00.01-<<Մանկավարժության տեսություն և պատմություն>> մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսության մասին

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց ներգործությունն են ունենում կրթության ոլորտի վրա՝ ենթարկելով էական փոփոխությունների: Կրթության բնագավառում բարեփոխումների համատեքստում հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է, որը ենթադրում է նախաձեռնությունների համալիր՝ ներառելով կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ սկսած մարդկային ռեսուրսներից, վերջացրած ինստիտուցիոնալ համակարգով:

Իրավմամբ, ՀՀ-ում Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքների հիմնական փուլի սկիզբ կարելի է համարել 2005թ. մայիսի 19-ը, երբ ՀՀ Կրթության և գիտության նախարարը ստորագրեց Բոլոնիայի անդամ երկրների կրթության նախարարների Բերգենի Կոմունիկեն, և Հայաստանը պաշտոնապես միացավ բոլոնյան գործընթացին՝ ստանձնելով պատասխանատվություն մինչև 2010թ. ավարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումն ու դառնալ կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի /ԵԲԿՏ/ մասը: Գործընթացը ենթադրում էր ուսման առավել լայն հնարավորություն՝ մատչելիություն, թափանցիկություն, շարժունություն, որակավորման ճանաչման ավելի մեծ հնարավորություն, եվրոպական չափանիշներին համապատասխան որակի ապահովման և գնահատման համակարգերի, որակավորումների շրջանակների մշակում, կիրառում և ինքնահավաստում: Ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսը, <<որակավորումների ազգային շրջանակի մշակումը հատուկ կարևորություն ստացավ Բոլոնիայի անդամ երկրների համար հատկապես 2005թ.եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի /ԵԲԿՏ ՈՇ/ և 2008թ. Հարատև կրթության համար որակավորումների եվրոպական շրջանակի /ՈԵՇ/ հաստատումից հետո >>: Բնականաբար, վերջիններիս հենքի վրա սահմանվեց որակավորումների ազգային շրջանակների մշակման ու կիրառման անհրաժեշտությունն ու համապատասխանեցման հավաստումը ԵԲԿՏ ՈՇ-ի և ՈԵՇ-ի հետ: Մեր երկրում 2011թ.-ին ՀՀ կառավարությունն առաջին անգամ ընդունեց կրթության Որակավորումների ազգային շրջանակը /ՈԱՇ/, որի նպատակն էր ոչ միայն ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին, այլև

նպաստումը հարատև ուսումնառության զարգացմանը, որակավորումների ազգային համակարգի արդիականացմանը և կրթական ու աշխատանքային շարժունության օժանդակմանը ազգային և միջազգային մակարդակներում: ՀՀ-ում ՈԱԾ-ի արդյունավետ իրականացումն ու ԵԲԿՏ ՈԾ-ի հետ համապատասխանության հաստատումը /ինքնահավաստումը/ կարող են, ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսը, նպաստել նաև ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավմանը, որակավորումների հանդեպ հանրության վստահության ու միջազգային մակարդակում համադրելիության և ճանաչելիության բարձրացմանը: Սույն ատենախոսությունը նվիրված է նշյալ հիմնախնդրի ուսումնասիրմանը, որով էլ պայմանավորված է հետազոտության ***արդիականությունը***:

Հետազոտության նպատակով հստակ որոշակիացված է, թե ինչ հիմնախնդրի լուծմանն է միտված այս ուսումնասիրությունը:

Հետազոտության վարկածում, որում ենթադրվում է, որ որակավորումների ազգային շրջանակի մշակման և կիրառման արդյունավետությունը պայմանավորված է դրանց հիմքում որակավորումների մետաշրջանակների բնութագրիչների կիրառմամբ, կրթության ազգային առանձնահատկությունների շեշտադրմամբ, միջազգային փորձի ուսումնասիրման անհրաժեշտությամբ, ՀՀ որակակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման խնդիրների լուծման գործում արդիական մոտեցումների համալիր կիրառմամբ, որոնք իրենց արտացոլումն են գտել թե՛ տեսականորեն ատենախոսության բոլոր գլուխներում, թե՛ հաստատվել ՀՀ ՈԱԾ-ի ինքնահավաստման մշակված մոդելում:

Հետազոտության նպատակով ու վարկածով պայմանավորված՝ հեղինակն առաջադրել է 7 խնդիր, որոնցից յուրաքանչյուրն իր լուծումն է ստացել աշխատանքի համապատասխան գլուխներում: Հստակ ձևակերպված նպատակից, առաջադրված գիտական վարկածի և պաշտպանության ներկայացվող դրույթներին համապատասխան ներկայացվել են 6 կետից բաղկացած կուռ եզրակացություններ:

Ատենախոսության 1-ին՝ <<Որակավորումների շրջանակները և դրանց մշակման մեթոդաբանությունը>> գլխում հանգամանորեն ներկայացվել են որակավորումների շրջանակների տեսակներն ու զարգացման նախադրյալները, որակավորումների մետաշրջանակների հիման վրա որակավորումների ազգային շրջանակների մշակման ազգային ու միջազգային փորձը: Ատենախոսն այս գլխում հիմնավորել է, որ բարձրագույն կրթության համակարգի բարելավման, կրթական գործընթացների կազմակերպման ու իրականացման գործում որակի մշակույթի ձևավորման կարևոր խթան են հանդիսացել Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի համար որակավորումների համընդհանուր շրջանակի և Որակավորումների եվրոպական շրջանակի մշակումն ու հաստատումը, ինչպես նաև դրանց ազգային շրջանակների մշակումն ու գործարկումը: Ըստ էության, Որակավորումների եվրոպական

շրջանակը, որպես մեթոդաբանական հենք եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների ազգային շրջանակների մշակման ու կիրարկման համար, ուղղորդող և համահարթեցնող գործիք է, որն ապահովում է բարձրագույն կրթության համակարգերի միջազգայնացումը, խթանում ուսանողների շարժունությանն այդ համակարգերի շրջանակում՝ նպաստելով նաև շարունակական կրթության տարածմանն ու զարգացմանը: Այս գործում անմասն չի նաև մեր երկիրը, քանի որ ՈԱՇ-ի կայացման և արդյունավետ կիրառման խնդրի լուծումը կխթանի ոչ միայն ազգային աշխատաշուկայի և հասարակության պահանջների բավարարումը, այլև ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի միջազգայնացումն ու որակավորումների փոխճանաչումը:

Ատենախոսության 2-րդ գլխում, որը վերնագրված է <<ՀՀ Որակավորումների ազգային շրջանակը որպես մասնագիտության կրթական ծրագրերի մշակման մեթոդաբանական հիմք>>, քննարկվել է որակավորումների ազգային շրջանակների դերակատարությունը վերջնարդյունքահենք կրթության կազմակերպման և իրականացման գործում, ուր կարևորվում է հատկապես բարձրագույն կրթության բարեփոխումների համատեքստում անցումը <<պարտադիր և խիստ գիտակարգային կրթությունից դեպի առավել հարմարվողական և միջգիտակարգային կրթության, որը ենթադրում է նաև շրջանավարտի կամ մասնագետի գնահատման որակավորումների վրա հիմնված մոտեցումից անցում դեպի կոմպետենցիաների վրա հիմնված մոտեցում>>, որն աշխատանքում ներկայացված է աղյուսակի տեսքով՝ /Հ.5/ տարբերակելով նմանություններն ու տարբերությունները: Սույն գլխում հեղինակը քննարկել է նաև մասնագիտական կրթական ծրագրերի /ՄԿԾ/ վերջնարդյունքների մշակման մոտեցումները՝ ներկայացնելով ՀՀ 10 բուհերում իր կողմից իրականացված հետազոտության արդյունքները:

Ուշագրավ է հատկապես աշխատանքի 3-րդ <<Որակավորումների ազգային շրջանակի գնահատումը ինքնահավաստման միջոցով>> գլուխը, ուր որպես գիտական նորույթի կարևորագույն բաղադրիչ, հեղինակի կողմից ներկայացված է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման մոդել, որը ատենախոսության շրջանակում կատարված հետազոտության արդյունքների արգասիք է:

Առանցքային է հատկապես այն, որ սույն հետազոտության շրջանակում առանձնացվել են ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման գործընթացի դերակատարներ, նրանց համար սահմանված գործառույթներ, որոնք ներկայացված են մշակված մոդելում՝ նպատակ ունենալով նպաստելու ՀՀ ՈԱՇ-ի կիրառման արդյունավետության բարձրացմանն ու ինքնահավաստմանը:

Այսպիսով, աշխատանքն ինքնուրույն, ավարտուն, ամբողջական ուսումնասիրություն է: Ատենախոսը հասել է իր առջև դրված նպատակին՝ լուծելով բոլոր առաջադիր խնդիրները:

Այնուհանդերձ կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ.

1. Մենք այնքան էլ համաձայն չենք ատենախոսի այն պնդմանը, որ բուհերում<<ՀՀ ՈԱԾ-ի կիրառման և ՈԱԾ-ի բնութագրիչների հիման վրա կրթական վերջնարդյունքների մշակման հիմնախնդիրները շարունակում են մնալ *չլուծված* թե՛ մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակությունների ու կառավարման, թե՛ մանկավարժական մոտեցումների կիրառման տեսանկյունից>>: Ուզում ենք փաստել, որ ԵՊՀ 2017թ. <<Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը>> Tempus <<ԱՐՄԵՆՔԱ>> նախագծի շրջանակներում հրատարակել է դասախոսի ձեռնարկ /հեղ. Ա.Բուդաղյան, Ա.Գրիգորյան/, ուր <<Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակումը>> գլխում 2 ենթագլուխ նվիրված է վերոնշյալ խնդրի լուսաբանմանը /1.4 և 1.5/:

2. Ատենախոսի այն տեսակետը, որ <<ուսումնասիրված 10 բուհերից 2-ում /ԵՊՀ և ՀՊՏՀ, մասնավորապես խոսքը վերաբերում է ԵՊՀ-ին/ ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների մշակման վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումներ և ցուցումներ ներկայացված չեն>>, նշենք, որ դեռևս 2010թ. ԵՊՀ-ում հրատարակվել է ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական հայալեզու ուղենիշներ, որի նպատակն էր ԵՊՀ դասախոսական կազմին և կրթական ծրագրերի մշակման աշխատանքային խմբերին հստակ ցուցումներ տալ համալսարանի կրթական ծրագրերին ներկայացվող հիմնական պահանջների վերաբերյալ:

3. Ատենախոսը <<որակավորումների ազգային շրջանակի>> սահմանումը տալիս է՝ վկայակոչելով Մասնագիտական ուսուցման զարգացման եվրոպական կենտրոնի տերմինաբանական բառարանը, սակայն ցանկալի կլիներ ներկայացվեր նաև <<>Որակավորումների ազգային շրջանակի 101եզրույթների բացատրական բառարանը, ուր ոչ պակաս գիտականորեն սահմանվել է <<Որակավորումների ազգային շրջանակ>> եզրույթը:

4. Աշխատանքում տեղ են գտել մասնագիտական որոշ հասկացությունների անճշտություններ: /անհատ-անձ հասկացությունների շփոթում- անհատի շարունակական կրթություն, անհատն ուսուցման գործընթացի ավարտին...., էջ 14, 30, 90/

5. Աշխատանքի որոշ էջերում առկա են մտքերի, սահմանումների կրկնություններ:/ էջ 86, 105/:

6. Հեղինակն ատենախոսության 3-րդ գլխում հանգամանորեն ներկայացրել է ինքնահավաստման գործընթացի միջազգային փորձը/Իռլանդիա, Գերմանիա, Բելգիա/: Աշխատանքն առավել կշահեր, եթե ատենախոսը ներկայացներ իր տեսակետը, թե նշյալ երկրներից որ մեկի փորձն է առավել արդյունավետ կիրառել էքստենսիվ-տրանսֆորմացիոն ճանապարհով մեր երկրում:

Վերոնշյալ դիտարկումները, սակայն, ամենևին չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը: Անի Մազմանյանի <<Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում>> վերնագրով ԺԳ.00.01 <<Մակավարժության տեսություն և պատմություն>> մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսությունը բավարարում է գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկ. ամբիոնի դոցենտ՝ Ա.Աշիկյան

Դոցենտ Ա.Աշիկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար՝ Լ. Հովսեփյան

/պատմ.գիտ.թեկնածու/

17.06.2021թ.